96. ՉՈՓՈՒՈ ՔՈՒՐԴԸ

Ախպե՛ր, ես մի վախտ չարվադարութիւն ի անում։ Մի հետ մի քանի ընկերներով կարտոփ տարանք Շորագյալ ծախելու։ Լոռու մի մատտահն էլ կարտոփն ա, հո գիտե՞ք։ Մի քանի հետ էլ մեղր եմ տարել ծախ։ Ամա մեղրից խեր չկա։ Ասած ա. «Չամիչը հատ-հատ, մեղրը մատ-մատ կհատնի»։

Հա՛, գնացինք հասանք Տաշղալա։ Էնտեղից էլ ճամպա բռնեցինք դպա Մասաարա։ (Մաստարեն մի ձորի միջի ա։ Լավ ախպրնի ունի)։ Ճամպին մեղ մի մարդ ռաստ էկավ, որ մի քյահլան ձի նստած՝ դնում էր Գյումբրի (Ալեքսանդրապոլ)։

Նա ասավ.— Կարտոփը կտանեք մեր տունը։ Ես էդ գեղի գալավան եմ։ Կասեք էրոյի տղա Արթենի տունը ո՞րն է։

Նա հանեց իր տերողորմեն նշան տվուց, գնացինք գլավնու տունը։ Դեռ բեռները վեր չէինք բերել, պատմեցինք գլավնու բսպարանքը ու նշանը տվինք։

Բեռների վեր բերելն ու տաղթմիշ անելը մին էլավ. հարևաններին թով էլան. նրանցից ամեն մինը մի հակը տարավ։ Գլավնու ախպերն ամեն մնի հեդեվից ձեն էր տալի. «Ծո՛, իմալ կտանեք, էմալ էլ բերեք»։ Կարճ ժամանակում մեր կարտոփնին ցորենի դառան։ Կտրտոփը ցորնի բարեբար վեր կալան։

Էդ րիգուն գլավնանց տանը մեզ մի լավ պատիվ տվին։ Նրանք

ուրիշ զոնախնի էլ ունեին։ Էդ զոնախնու մեջ մի բոյով ու ջահել քուրդ կար, քոլոզը ծածկած. ինքն էլ լավ հաքնված։ Ամա ընթավուր չոփուռ էր, որ զարմանալի։ Ջեչոտ չէր, որ ասեիր ծաղկամնա ա։

Սաղ էրեսը փոս-փոս էր, ոնց որ կտրատած, յա պուճուր դրով ծակծկած։ Նա շատ թամուզ հայերեն խոսում էր, լսողը, հեռի հավատիցը, հենց իմանում էր, թե հայ ա։

Ես նրանից վեր քաշված ու զարմացած նրան հարցրի.— Ամոթ չըլի հարցնիլն, ախպեր, էդ ընչիցն ա քեզ էդ չոփուռությունը պատահի՞լ։

Նա ծանդր ախ քաշեց ու քոլոզը վեր կալավ։ Գլուխը բացվեց։ Գլխի կաշին պոկ էկած էր։ Մի հատ մազ չկար դլխին։ Գլխի ղափաղի ոսկորն էրևում էր։ Ես սարսափեցի։

Նա քոլոզն էլ եդ դրեց դլխին ու պատմեց հետևյալը՝ իր դլխի եկածը.

— Որ ասում ես, ախպեր ջան, պատմեմ էս պլոկած գլխիս էկած փորձանքը։ Ես Երևանցի Ջաֆար աղի տղեն եմ, անունս է Ջոռ-Մուստաֆա։ Սաղ մըհալումը մեր պես անումով, հարուստ ու գյուռ օջախ չկա։ Առաչ էլ անումով աղա ինք, ամա տկլոր աղա ինք։ Հորս՝ Ջաֆար աղի, սաղ հարստությունն ու պարծանքը ես ի։ Իմ ընկերների, իմ թայ ու թուշի մեջ մի հատը քաշ տղա չկար։ Ամեն տեսակ ձի սովորցնել, քյամանդ գցել-բռնել, հեծնել, թուր ու թվանք բանացնել, նիզակ ճոճել, դալխան պահել— էս բոլորն ինձ համար խաղ ու պար էր։ Իմ թայ դոչաղ տղերանցից ոչ մինն իմ ոտով չէր գալի։ Մեր մըհալումն իմ կուռն ոլորող տղա չկար։ Ես փահլվանի ու իգիթի համբավ հանեցի։ Իսկ շնորքով, բոյով ու բուսաթով ինձ հավասար մինը չկար։ Երեխությունից իմ մազերս, որ ոսկի գույն ունեին, չէին խուզել։ Քանքուլներս՝ վախտ հուսած, վախտ փաթըթած գլխիս, վախտ վերարձակ թողած՝ ինձ ավելի շնորք էին տալի։ Ինչ խաղ լիներ՝ ջիրիդ լիներ, որս գնալ լիներ, հարսանիքներում ու մեյդաններում ձի խաղցնել լիներ, թվանքով նշանի գցել լիներ— ես ի առաջինը։ Ինձ ոչ մի բանում զոռ անող չկար։ Դրա համար իմ անունը դրին Ջոռ-Մուստաֆա։ Հերս ինձ ջահել օրով հարսանիք արավ։ Սաղ Երևանու մըհալում աղջիկ չճարեց, գնաց Կաղզվանից ինձ աղջիկ ուզեց։ Ջոռ հարսանիք արինք։ Անցավ մի քանի վախտ։ Իմ կնիկը մի անգամ գնաց հորանց։ Մենձ ախպերն էկավ տարավ։ Մի էրկու շաբաթից գնացի Կաղզվան, որ նրան բերեմ։ Իմ աներն էլ հարուստ օջախ էր. հինգվեց տղա ուներ։

Մի էրկու օր մնացի Կաղզվանում։ Էդտեղ ծանոթացա մի դավրիշի հետ։ Էդ դավրիշն ասավ, որ ինքն էլ պիտի գա Երևան. միասին գնանք։ Խնդրեց, որ մի քիչ ճամպա պահեմ, որ ինքն իր համար մի ձի ճարի ու մեզ հետ գա։

(Մենք՝ ես ու կնիկս էլ նրան ճամպա չպահեցինք, ըղու էլանք, ճամպա ընկանք)։

Կաղզվանից մի քանի վերստ դեռ չէինք հեռացել, եդ մտիկ արինք, տեհանք, որ մի ձիավոր ա գալի։ Գալիս ա ամա ընթավուր զժիդ տված ա գալի, ոնց որ երկնքից կրակ ըլի գալիս։ Թոզ ոռ գումանը պատել էր աշխարհը։ Կնիկս ասավ.— Արի փախչենք, հարամի ա գալի։

Ես անկաջ չարի, ասի.— Ես Զոռ-Մուստաֆան ըլիմ ու մարդուց ու հարամուց վախենա՞մ։

Ձիավորը էկավ հասավ։

Դարվիշն էր մի քյահլան ձի նստած։ Մեզ բարևեց ու ընկերացավ։ Մտանք Կաղզվանա մերին։ Երբ որ հասանք մերու մեջտեղը, ճամպեն էրկուսի էր բաժանվում՝ մինը մենձ ճամպեն էր, մինն էլ մի կածան, որ տանում էր դպա մերու ղալնկուտը։ Դավրիշն էդ ճամպեն բռնեց։ Իմ կնիկն էլ, ոնց որ թոկով կապված, նրա եդևից իր ձին քշեց։ Ասի.— Այ կնիկ, էդ ո՞ւր ես գնում, մեր ճամպեն էդ չի։

Նա անգաջ չարավ ու դավրիշի ետևից գնաց։ Ես ձիով աղաքը կտրեցի։ Դավրիշը գոռաց.— Էդ իմ կնիկն ա, ի՞նչ իրավունքով ես աղաքը կտրում։

Ես կատաղեցի ու ձիուց իջա։ Նա էլ իջավ։ Ու մեր մեջ սաստիկ կռիվ սկսվեց։ Սկզբում ոնչ ես ի զոռում, ոնչ նա։ Էրկուսս էլ կըռվում էինք արջերի նման։ Վերջում նա հետզհետե թուլանում էր, իսկ ես ուժեղանում, քիչ էր մնում, որ նրան գետնովը տայի։ Էդ վախտը կնիկս ձիուցը վեր էկավ՝ ու ոտիցս բռնեց։ Նրանք էրկուսով ինձ վեր գցեցին։ Սրտիս հերսից խելքս գլխիցս թռավ։ Էն իմացա, որ անիրավ դավրիշը երկար մազերս՝ քանքուլներս մի բանի փաթաթեց։ Աչքս բաց արի տեհա, որ մի բարձր կաղնի ծառից մազերիցս կախված եմ։ Դավրիշն ու կնիկս կորել են։ Ձիս մոտս կանգնած խրխնջում էր, կատաղությունից խելքս կորավ։ Դուն ինձ ասա՝ թուրը վրես, ղամեն վրես, դանակը ջիբս, մազերս իմ ձեռքով կտրելու տեղը՝ ինձ սաստիկ թափահարեցի, ճլորթի ընկա ու ընկա ներքև։ Մազերս պոկ ընկան։ Գլխիս կաշին էլ հետը պոկվեց։ Գըլխիցս արուն շատ գնաց, ամա ես ինձ չկորցրի, գլուխս փաթաթեցի,

ձիս հեծա ու նրանց գնացած ճամպով գնացի։ Գնացի հասա մի մենձ էրի դռու։ Տեսնիմ ներսը դարվիշն ու կնիկս քեֆ են անում։ Կատաղած վրա ընկա, որ դավրիշին խեղդեմ։ Մեր մեջ էլի մի սարսափելի կռիվ սկսեց։ Ասլանն ու դափլանն էդպես չէին կռվիլ։ Ես ոնց որ յարալու գազան, դավրիշին քիչ մնաց գլխիս ծերն հանեմ ու գետին զարկեմ, հոգին փչի։ Էդ վախտը կնիկս նրան օգնության հասավ։ Քած շան նման սկսեց կծոտել ձեռքերս, ծնկներս ու կուրծքս։ Դավրիշը սիրտ առավ ու երկուսով ինձ գետին գլորեցին։ Էրի առաջ բսած դուզ ծառին ինձ թոկով կապեցին՝ ոտներիցս մինչև վիզս։ Ու իրանք նստեցին միրգ ուտելու։ Մի մենձ թարախանով լիքը բաղդատու խուրմա կար ազաքները։ Էն անիրավ դավրիշը սկսեց ուտել խուրմեն ու կորիզներն էրեսիս փչել։ Կորիզներն գալիս էին էրեսիս դիպչում, ոնց որ գյուլլա՝ երեսս ծակծկում։ Էն անիրավը վռազ-վռազ ուտում էր խուրմեն ու կորիզները կարկտի պես թափում էրեսիս։ Ես հազիվ աչքերս էի պահում։ Սաղ էրեսս ծակծկվեց արունլվիկ եղավ։ Սիրտս մղկտում էր, ջիգյարս կտրատվում։ Ամա ես ձեն ծպտուն չէի հանում, մի անգամ «օֆ» չարի։ Իմ էդ վարմունքը ավելի էր կատաղացնում էն սատանյելին։ Վերջն էդ լրբերը՝ դավրիշն ու իմ ղախպա կնիկը՝ իրենց քեֆը քաշելուց եղը, իմ աչքի աղաքին պառկեցին ու շնթռեցին. խոր քուն մտան, երևի ինձ մեռած կարծելով։ Նրանց քնելուց եղը ես սկսեցի ատամներով ինձ փաթաթած կռներս կապած թոկը կրծոտել։ Կրծեցի, կրծեցի, թոկը կտրեցի։ Ետո կամաց կապերս արձակեցի։ Թուրս ուալուբով[1] վերցրի, որ էրի պատից կախել էին։ Ու հոգեառի պես դավրիշի գլխավերևն անցա։ Աջ ձեռքով թուրս պահած, ձախ ձեռքով մազերիցը ղայիմ քաշեցի, նա աչքը բաց արավ, զարհուրանքով ինձ մտիկ արավ ու ուզաց վեր թռչի։ Ամա ես ժամանակ չտվի, թրով գլուխը թռցրի։ Անզգամ կնիկս էլ զարթնեց։ Ես նրան չսպանեցի, ձեռք ու ոտքը կապոտեցի։ Եդո մտա էրի մեջը ման էկա. ի՞նչ տենիմ։ Էրի խորքում հինգ հատ քյահլան ձի կապած, մինը մնուց լավը, աղաքները չամիչ լքցրած։ Քիչ էլ աղաք գնացի մենձ մաղարա էր։ Տեսնիմ մի տեղ ոսկի կիտած, մի տեղ էրծաթ։ Մի կռանս էլ շատ խաս կտորներ՝ մախմուր, աթլաս ու հազար ու մին խաս ու զումաշ դասած։ Թողի, դուս էկա։ Ես իմ ձիուն նստեցի. կնկանս էլ իրա ձիու վրա կապկպոտեցի ու եդ գնացի Կաղզվան անորանցս տունը։ Գիշեր էր։ Անորըս տղեքը դուս էկան։ Նրանք մեզ տեհան

---

1 Ուալուբ-զգուշություն—Ս. Բ.։

ու զարմացան. ինձ էլ որ մտիկ արին, զարհուրեցին։ Անբրս ու մեկել տանըցիք էլ նրանց եղնուց դուս թափեցին։ Ես սյատմեցի եղելությունը։ Անորս մենձ տղեն որ մի ղոշաղ ու նամուսով տղամարդ էր, էդ բանը որ լսեց, կատաղեց։ Էլ ժամանակ չտվուց. «Ամնամուս», գոռաց, իր թուրը քաշեց ու կնկանս՝ իրա քրոջ, գլուխը թռցրեց։ Բոլորն էլ ասին. «Հախն էր»... Էդ գշեր ինձ իրանց տանը պահեցին։ Մյուս ըռավոտը ինձ իրանց փոքր քրոջ հետ պսակեցին ու ճամպա դրին։ Ես անորս մենձ տղին հետս վերցրի, երբ հասանք մերին, ես նրանց իմ թազա կնկանն ու իր մենձ ախպորը տարա թուշ էն էրի դուռը։ Վեր էկանք։ Անորս տղի հետ ներս մտանք։ Բոլոր ոսկին ու էրծաթը, էն խաս ու ղումաշ ճոթ ու կտորները բեռներ բռնեցինք։ Դուրս քշեցինք դավրիշի հինգ ձիանը ու բարձեցինք, հինգ ձիաբեռ էլավ։ Երկու ձիաբեռը տվի անորս տղին, իսկ իրեք ձիաբեռը ես վեր կալա։ Նա գնաց իրանց տուն, ես էլ իմ թազա կնկա հետ էկա մեր տունը։ Շատ չքաշեց հերս՝ Ջաֆար աղեն, դարդից մեռավ։ Իմ բերած հարստությունը նրա աչքին չէր գալիս, քանի որ նրա աչքի լույս Ջոռ-Մուստաֆեն զրկվել էր իր ամենամենձ հարստությունից՝ էրեսի գեղեցկությունից, ոսկեքանքուլ մազերից, մի խոսքով իրա շնորհալի քիսպաթից[1]։

— Դարիբ ախպեր,—դարձավ ինձ Ջոռ-Մուստաֆեն,—թուրքն ասում է. «Քիսպաթ դա բիր դովլաթ դըր»[2]։ Հմի ես էդ դովլաթից, որ աուաչ իմ պարծանքն էր, զրկված եմ ինձ պատահած էդ փորձանքի էրեսից։

---

1 Քիսպաթ—դեմք, պատկեր—Ս. Բ.։

2 Քիսպաթ դա բիր դովլաթ դըր—Գեղեցիկ դեմքն էլ հարստություն է.—Ս. Բ.։